

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

15.04.2011թ.

գ. Ծաղկաշեն

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը հանձնաժողովը նախագահությամբ՝ Ի. Ասատրյանի, անդամությամբ՝ Յու. Թաթարյանի, Ա. Գասպարյանի, Հ. Օհանյանի, Վ. Մնացականյանի, Վ. Պողոսյանի վարչական հսկողության շրջանակներում, մասնակցությամբ՝ մարզի Ծաղկաշեն համայնքի ղեկավար Սերյոժա Սարգսյանի և նրա աշխատակազմի ուսումնասիրեց համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը 2009-2011թթ. ընթացքում: Ուսումնասիրությանը մասնակցել է նաև մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մասնագետը:

Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները՝

*1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման և դրանց օրինականության բնագավառում*

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 11 նիստ և ընդունել է 22 որոշումներ:

2010թ. գումարել է 7 նիստ և ընդունել է 21 որոշում:

2011թ. անցած 3 ամիսներին գումարել է 2 նիստ և ընդունել է 5 որոշումներ:

Համայնքի ղեկավարը 2009թ. ընդունել է 16, 2010թ. - 16, 2011թ.- 11 որոշումներ:

Համայնքի ղեկավարը 2009թ. արձակել է 30, 2010թ.-19 կարգադրություններ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը 2010թ. արձակել է 3, 2011թ. 1 հրաման:

Պետք է նշել, որ բացի աշխատակազմի քարտուղարի հրամանների, մյուս իրավական ակտերի մի մասը, մասնավորապես համայնքի ղեկավարի կարգադրությունները, իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով չեն համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ մասի և 3-րդ կետի, 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի, դրույթներին:

Համայնքի ավագանին իր 16.01.2009թ. թիվ 1 նիստում հաստատել է տեղական տուրքերի դրույքաչափերը և վճարները, նույն նիստի թիվ 2 որոշմամբ հաստատել է աշխատակարգի և սոցվճարների ապառքների մարման ժամանակացույցը, թիվ 5 որոշմամբ սահմանել է համայնքային սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրելու և վարձավճարների չափը:

02.03.2009թ. թիվ 3 նիստում ավագանին քննարկել է <<Բարի հույս>> հաշմանդամ երեխաներին առողջության կենտրոն հիմնելու հարցը: Նույն նիստում քննարկվել է արտոսավայրերի վարձակալության տրամադրելու հարցը:

18.05.2009թ. թիվ 4 նիստում հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը և դրույքաչափերը:

30.06.2009թ. թիվ 5 նիստում որոշում է կայացվել դադարեցնել գրադարանի գործունեությունը, իսկ գրականությունը նվիրաբերել դպրոցին: 14.10.2010թ. թիվ 9

նիստում քննարկվել է համայնքի բյուջեի 3-րդ եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման հարցը /90%/: Համայնքի 2010թ. բյուջեն քննարկվել և հաստատվել է 20.01.2010թ. թիվ 1 նիստում: 20.01.2011թ. թիվ 1 նիստում ավագանին սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, նույն նիստի թիվ 2-րդ որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: 2011թ. համար սահմանվել է հաստիքային 7 միավոր, որից 3-ը համայնքային ծառայություններն են:

Նույն նիստի թիվ 3 որոշմամբ հաստատվել է հողի հարկի և գույքահարկի ապառքների գանձման ժամանակացույցը:

10.03.2011թ. թիվ 2 նիստում լսվել է 2010թ. համայնքի բյուջեի կատարողականը /այն կազմել է 103%/: Նույն նիստում քննարկվել է նաև արոտավայրերի վարձակալության տրամադրելու հարցը:

Համայնքի ղեկավարի 25.12.2009թ. թիվ 48 որոշմամբ հաստատվել է քաղաքացիների ընդունելության կարգը:

23.11.2010թ. թիվ 8 որոշմամբ համայնքային ծառայության վերապատրաստման են ուղարկվել աշխատակազմի քարտուղարը և գլխավոր մասնագետը:

10.01.2011թ. գյուղապետի թիվ 13 որոշմամբ ստեղծվել է գույքագրման հանձնաժողով, իսկ 21.01.2011թ. թիվ 16 որոշմամբ բնակչության սոցիալական կազմը որոշելու համար ստեղծվել է համապատասխան հանձնաժողով:

10.03.2011թ. թիվ 20 որոշմամբ ստեղծվել է գույքագրման նոր հանձնաժողով:

Համայնքի ավագանու կանոնակարգը հաստատվել է 4.12.2008թ. թիվ 1 որոշմամբ, իսկ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է գյուղապետի 29.01.2010թ. թիվ 51 որոշմամբ:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը՝ մասնավորապես տեղական տուրքերը և վարձավճարները, բյուջեում կատարվող փոփոխությունները, աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը, համայնքի զարգացման ծրագիրը, ավագանու կանոնակարգը, բյուջեի տարեկան հաշվետվությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով չեն ներկայացվել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

Համայնքում մշակվել, հաստատվել և գործողության մեջ չի դրվել առևտրի, հասարակական սննդի սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որով չեն կատարվել ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ կետի և 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Կապված ՀՀ օրենքի փոփոխության հետ նոր խմբագրությամբ պետք է հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:

## 2. Համայնքային ծառայության և գործավարության բնագավառներ

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 205-Ա հրամանով հաստատվել է համայնքային ծառայության 3 պաշտոններ.

1. համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար /ծածկագիր՝ 1.2-1/
2. աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 2.3-1/
3. աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-1/

9.07.2008թ. աշխատակազմի քարտուղարը և գլխավոր մասնագետը անցել են առեստացիան:

31.06.2010թ. մրցույթ է տեղի ունեցել աշխատակազմի առաջատար մասնագետի թափուր տեղի համար, սակայն առաջատար մասնագետին ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չի շնորհվել դասային աստիճան:

1.12.2006թ. գյուղապետի 27/1 որոշմամբ համայնքի նախկին աշխատողները համարվել են համայնքային ծառայողներ:

ՀՀ ՏԿՆ 20.01.2009թ. թիվ 37-Ա հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ ՏԿՆ 21.11.2006թ. թիվ 205-Ա հրամանում, որով աշխատակազմի քարտուղարը ընդգրկվել է գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբում և ելնելով դրանից համայնքի ղեկավարի 06.03.2009թ. թիվ 38 որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել են համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը:

Համայնքում համայնքային ծառայության կադրային գործերը վարվում են ՀՀ համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 7.11.2006թ. թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով:

Կադրերի գործերի վարման գործում տեղ գտած որոշ թերություններ մեր կողմից հանձնարարվեց կարճ ժամկետներում շտկելու:

Գործավարության ուսումնասիրությունից պարզվեց, որ համայնքում պահվում է քաղաքացիների դիմումների գրանցամատյան, ըստ որի գյուղապետին 2009թ. դիմել են 38 քաղաքացիներ, 2010թ. – 44, 2011թ. անցած 3 ամսում 12-ը:

Վերադաս և այլ կազմակերպություններից մուտք են եղել՝ 2009թ.- 9, 2010թ. - 17 գրություններ, սակայն չեն պահպանվում ելքագրված գրությունների կամ դիմումների պատասխանների կրկնօրինակները կամ պատճենները:

## 3. Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը և ենթակառուցվածքը

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2009-2012թթ. ծրագիրը հաստատվել է ավագանու 16.01.2009թ. թիվ 3 նիստում:

համայնքի ընտանիքների թիվը 177-ն է, բնակչությունը՝ մոտ 670-ը, որոնցից թոշակառուներ են 102-ը, հաշմանդամներ են՝ 33-ը, «Փարոս» համակարգում ընդգրկված են 30 ընտանիքներ:

Համայնքում կա միջնակարգ դպրոց, բուժ ամբուլատորիա, մշակույթի տուն:

Գյուղապետարանում աշխատում են 7 մարդ /ներառյալ անասնաբույժը/, բնակչության մեծ մասը զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Երիտասարդների մի մասը մեկնում է արտագնա աշխատանքի: ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ հաստատվել է համայնքի սեփականության ցանկը, ըստ որի համայնքին ամրացված է որպես սեփականության ներքոհիշյալ հիմնական միջոցները

1/ մշակույթի տուն, 1 միավոր, ունի հիմնանորոգման կարիք, ինչպես ներսի, այնպես էլ ձեղնահարկի

2/ գրադարանի շենք

3/ բուժկետ, տեղակայված է գյուղապետարանի վարչական շենքում

4/ եկեղեցի

5/ վարչական շենք /ունի վերանորոգման կարիք/

6/ ջրամատակարարման ցանց /2.5 կմ/

7/ գազի ցանց /2.6 կմ/

8/ գերեզմանոց – 1

9/ էքսկավատոր – 1 միավոր

10/ ներհամայնքային փողոցներ /մոտ 4 կմ/ ունեն վերանորոգումների կարիք /իսկ համայնքի Գավառ-Ծաղկաշեն ճանապարհամասի Գավառի Հացառատ թաղամասի հատվածը դարձել է դժվարանցանելի/

11/ կամուրջներ – 4 միավոր

Համայնքում անհրաժեշտություն է առաջացել համակարգի կառուցման:

Վերանորոգման կարիք ունեն և ճանապարհները և խմելու ջրագիծը, իսկ գյուղի միջով անցնող հեղեղատարի ավերը ունեն ամրացման կարիք հեղեղումներից, սելավներից խուսափելու համար:

Գյուղապետարանի կողմից կարևորվում նաև խմելու ջրի ջրամբարի կառուցումը:

#### 4. Հողաշինարարության և հողօգտագործման բնագավառ

Ընդհանուր վարելահող – 361.66 հա, որից սեփականաշնորհվել է՝ 282.76 հա

Համայնքային սեփականության վարելահող – 78.90 հա

Արոտներ – 380.29 հա

Խոտհարք սեփականաշնորհված – 120.90 հա

Այլ հողատեսքեր – 380.29 հա

Տնամերձ – 42.74 հա

Համայնքային սեփականության վարելահողերից տրվել է վարձակալության 72.62 հա, որի համար նախատեսվել է 556,0 հազար դրամ, որը ամբողջությամբ հավաքագրվում և մուտքագրվում է /100%/:

Արոտների համար հաշվարկվում է 760.0 հազար դրամ վարձավճար, որից հավաքագրվել է՝

2009թ. – 370.0 հազար դրամ /48.7%/

2010թ. – 583.0 հազար դրամ / 76.7%/

5. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Ծաղկաշենի համայնքում, 2009-2010թթ. դրական աշխատանքներ են տարվել սեփական եկամուտների հավաքագրման, առաջադրանքների կատարման ուղղությամբ: Եթե 2005-2008թթ. այդ ցուցանիշը տատանվել է 27.4-62.4%-ի սահմաններում, ինչը, փաստորեն, ցածր է եղել մարզի այդ տարիների միջին մակարդակից, ապա 2009-2010թթ. ապահովվել է 92.2 և 103.0%-ի կատարում:

Աշխատանքներ են տարվել նաև աշխատավարձի և սոցվճարի հողվածներով նախորդ տարիների պարտքերի մարման, գույքային հարկերի ապառքների կատարման ուղղությամբ: Սակայն 2011թ. 1-ին եռամսյակում, մարզի միջին 18.4%-ի դիմաց, սեփական եկամուտների կատարողականը համայնքում կազմել է ընդամենը 12%, ընդ որում թերակատարվել են գանձման ենթակա բոլոր հարկատեսակների կատարողականները:

Բերենք համայնքի 2009-2010թթ. և 2011թ. 1-ին եռամսյակի բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.04.11թ.	%
Գույքահարկ	900.0	736.2	82.0	498.2	412.3	82.8	654.0	17.1	2.6
Հողի հարկ	3586.7	3865.8	107.8	2486.1	2057.0	82.7	3250.0	413.0	12.7
Տեղական տուրքեր	40.0	35.0	87.5	20.0	20.0	100.0	30.0	-	-
Հողի վարձավճար	1993.5	1337.8	67.1	1155.6	1795.6	155.5	1900.0	270.0	14.2
Վարչակ. գանձում.	-	35.6	-	-	-	-	-	-	-
Ընդ. սեփ. եկամուտներ	6520.2	6010.4	92.2	4159.9	4284.9	103.0	5834.0	700.1	12.0
Պատ. փազորութ.	729.6	668.8	91.8	729.6	600.0	82.2	600.0	-	-
Դոտացիա	5550.0	5550.0	100.0	6965.3	6965.3	100.0	7116.0	1779.0	25.0
Ընդամենը եկամուտներ	12800.0	12229.2	95.5	11854.8	11850.2	100.0	13550.0	2479.1	18.3

Նշենք, որ համայնքի ընդամենը եկամուտներում սեփական եկամուտների փաստացին 2009թ. կազմել է 49.1%, 2010թ.՝ 36.2%, մարզի միջին 28.5-27.9% ցուցանիշների դիմաց, ինչը դրական առաջընթաց է:

Գույքահարկի բազան համայնք է փոխադրվել 2006թ., երբ այդ հարկատեսակի գծով ապառքները կազմում էին 3502.2 հ/դրամ /գույքահարկի՝ 2258.5հ/դրամ, տույժերը՝ 1243.7 հ/դրամ/: Կատարված աշխատանքների արդյունքում ապառքները աստիճանաբար նվազել և 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 1211.0 հ/դրամ /գույքահարկը՝ 793.2 հգ.դրամ, տույժերը՝ 417.8 հ/դրամ/: Բայց գույքահարկի բազան ճշգրտելու, փաստացի շահագործման մեջ չեղած, ֆիզիկապես, բարոյապես մաշված, օտարված փոխադրամիջոցները, դրանք գրանցող և հաշվառող մարմինների /MPY-ների/ ցուցակներից դուրս գրել տալու ուղղությամբ դեռևս կան լուրջ անելիքներ:

Համայնքում գույքահարկի տարեկան հաշվարկային գումարը կազմում է շուրջ 240.0 հ/դրամ: 2009-2011թթ. բյուջեներում այդ հարկատեսակի գծով պլաններ են սահմանվել 498.2 հազար դրամից 900.0 հ/դրամի չափով կամ տարեկան պլաններում ներառվել են 250.0-ից 660.0 հ/դրամի ապառքների գանձումներ:

Հողի հարկի բազան համայնք է փոխադրվել 2008թ. հուլիսին, երբ այդ հարկատեսակի գծով ապառքները կազմում էին 15045.0 հ/դրամ /հողի հարկ՝ 8205.8, տույժերը՝ 6839.2 հ/դրամ/: Ապառքները կրճատելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների շնորհիվ դրանք տարեցտարի նվազել և 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 9877.7 հ/դրամ /հողի հարկ՝ 5903.9, տույժեր՝ 3973.8 հ/դրամ/:

<<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն 38 հողի հարկ վճարողներ ազատվել են հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից, գումարով 253.9 հ/դրամ:

141 հողի հարկ վճարողների համար տարեկան հաշվարկվում է 1809.9 հզ. դրամ հողի հարկ, սակայն 2009-2011թթ. համար այդ հարկատեսակի գծով պլաններ են սահմանվել 2486.1-ից 3586.7 հզ.դրամ կամ պլաններում, բացի բազային գումարից, ներառվել են 675.8-ից 1737.0 հ/դրամ նախորդ տարիների ապառքների գանձումներ, կազմած ժամանակացույցի համաձայն, ինչը գնահատվում է դրական: Հողի հարկի և գույքահարկի գծով ապառքների չափերը ճշգրտելու և դրանք հնարավորինս գանձելու /կրճատելու/ ուղղությամբ դեռևս կան անելիքներ:

Մարզպետարան ներկայացվող ամենամսյա համապատասխան հաշվետվությունների համաձայն, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքում նախորդ տարիների պարտքերը աշխատավարձի հոդվածով ցույց են տրված 5770.0 հ/դրամի և սոցվճարի գծով 1026.0 հ/դրամի չափով: 2009թ. ընթացքում այդ պարտքերից մարվել են՝ աշխատավարձի հոդվածով 3892.9 հ/դրամ և սոցվճարի հոդվածով 725.1 հ/դրամ: Գյուղապետարանի կողմից կատարված ճշգրտումների արդյունքում, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ և այդուհետ ներկայացված հաշվետվություններում, ցույց են տրվել, որ այլևս, աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով, նախորդ տարիների պարտքեր չունեն:

Համայնքի 70.5 հա վարելահողեր, բնակիչների հետ կնքված պայմանագրերով, ամեն տարի, հանձնվել են վարձակալման, որոնցից մշտապես գանձվել է 560.0 հ/դրամ վարձավճար: Բացի այդ, 2009-2010թթ. արոտներից պլանավորվել են մինչև 760.0 հ/դրամ արոտի վարձավճար և այդ հարկատեսակի գծով նախորդ տարիների ապառքների գանձում՝ 580.0-ից 673.0 հ/դրամի չափով:

Ձեռնարկված միջոցների շնորհիվ 2009թ. համայնքի բյուջե հավաքագրվել է 1337.8, իսկ 2010թ. 1795.6 հ/դրամ վարձավճարներ: Չնայած դրան, 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ արոտի վարձավճարների գծով դեռևս առկա են 5520.0 հ/դրամի նախորդ տարիների ապառքներ և գյուղապետարանը լուրջ աշխատանքներ պետք է տանի դրանք կրճատելու և լիկվիդացնելու ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ և ավագանու հաստատմամբ 2009թ. պահվել են 8 հաստիքային միավորներ /430.0 հ/դրամ ընդամենը ամսեկան աշխատավարձով/ 20.0-ից 98.0 հ/դրամ դրույքաչափով, սակայն 2009թ. մայիսի 1-ից մշակույթի տան 3 աշխատողների կրճատման և մնացած աշխատողների դրույքաչափերի նվազեցման միջոցով ամսական վճարվել է 255.6 հ/դրամ: 2010թ. սահմանվել և պահվել է 7 հաստիքային միավորներ, ամսական 36.0-ից 98.0 հզ.դրամի չափով /ընդ որում տեղակալին և ակումբավարին վճարվել է ապրիլ-մայիս ամիսներից/, ընդամենը ամսական 458.0 հ/դրամ գումարով: 2011թ. պահպանվել են 7 հաստիքային միավորներ, ամսական 42.0-ից 128.0 հ/դրամ դրույքաչափերով /ակումբավարին վճարում չի կատարվել/, ամսական ընդամենը 543.0 հ/դրամ գումարով: Ավագանու որոշմամբ 2010թ. գրադարանը լիկվիդացվել է և, 8.04.2010թ.

կազմած ակտով, գրադարանի գույքն և 9200 կտոր գրքերն ու բրոշյուրները, ընդհանուր գումարով 271.2 հ/դրամ հանձնվել են համայնքի միջնակարգ դպրոցին:

Բյուջետային փաստացի ծախսերը 2009թ. կազմել են 11084.2 հ/դրամ, 2010թ՝ 9228.9 հ/դրամ և 2011թ. 1-ին եռամսյակում՝ 2100.8 հ/դրամ: Աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով կատարված փաստացի ծախսերը ընդամենը փաստացի ծախսերում կազմել են՝ 2009թ.՝ 92.0%, 2011թ. 1-ին եռամսյակում՝ 91.2%, իսկ 2010թ.՝ 79.1%:

Մնացած ծախսերի ընդհանուր գումարը բյուջետային փաստացի ծախսերում կազմել են 8.0-ից 21.0%, ըստ որում, յուրաքանչյուր հոդվածով՝ 10.0-ից 500.0 հ/դրամ գումարով:

Համայնքի կարիքավոր ընտանիքներին, ավագանու որոշումներով, տրվել են ֆինանսական օգնություններ, 2009թ՝ 220.0 հ/դրամ, 2010թ.՝ 500.0 հ/դրամ և 2011թ. 1-ին եռամսյակում՝ 125.0 հ/դրամ:

Վարչական բյուջեի միջոցների հաշվին, 2010թ. հունիսի 28-ի թիվ 5/10 և հոկտեմբերի 4-ի թիվ 10/02 պայմանագրերի համաձայն, կնքված <<Մաշխ>> ՍՊԸ-ի հետ, համայնքում կատարվել են գետի հունի մաքրման և գյուղամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ, որոնց կատարողական ակտերի գումարները կազմել են ~~200.0~~ 200.0 հ/դրամ և 200.0 հ/դրամ: Գնումները իրականացվել են սահմանված կարգով:

Ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին 2009թ. կատարվել են ընդամենը 200.0 հ/դրամի և 2010թ.՝ 1400.0 հ/դրամի ծախսեր: Ընդ որում, 5122 <<վարչական սարքեր և սարքավորումներ>> հոդվածով, 5.12.2009թ. թիվ 5/09 պայմանագրի և 9.12.2009թ. թիվ 9 հաշիվ-ապրանքագրի համաձայն, <<Օնլայն պլուս>> ՍՊԸ-ից ձեռք է բերվել համակարգչի մոնիտոր և էկրան, 200.0 հ/դրամ ընդհանուր գումարով:

2010թ. հուլիսի 2-ին <<Մաշխ>> ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ԱՇՁԲ-01/10 պայմանագրի համաձայն, համայնքում կատարվել են փողոցային լուսավորության կառուցման աշխատանքներ: <<Արևադարձ>> ՍՊԸ-ի միջոցով կատարվել են նախագծա-նախահաշվային աշխատանքներ /ՍՊԸ-ին վճարվել է 80.0 հ/դրամ/, որոնց գումարը կազմել է 1691.0 հ/դրամ: Սակայն կատարողական ակտի համաձայն, այդ աշխատանքները իրականացվել են 1280.0 հ/դրամով: Տեխսկողության համար վճարվել է 40.0 հ/դրամ: Ընդհանուր ծախսերը կազմել են ընդամենը 1400.0 հ/դրամ:

Հաշվապահական հաշվառման աշխատանքներում կան որոշակի թերություններ: Հանձնարարվեց՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքել և համակարգել հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում, բացել հաշվապահական հաշիվներ, կազմել շրջանառության տեղեկագրեր, վարել գլխավոր գիրք:






Համայնքում գնումներն իրականացվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների որոշ խախտումներով:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Առաջարկել մարզի Ծաղկաշեն համայնքի ղեկավարին՝
1. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը (որոշումներ, կարգադրություններ, հրամաններ) համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին.
  2. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթներին համապատասխան սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել լիազորված պետական մարմին՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
  3. մշակել, հաստատել և պետական գրանցում իրականացնելուց հետո սահմանված ժամկետում գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
  4. նոր խմբագրությամբ մշակել, հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը.
  5. աշխատանքներ տանել արոտավարձերի նախորդ տարիների ապառքների հավաքագրման ուղղությամբ.
  6. հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, մասնավորապես սկզբնական փաստաթղթերում առկա տեղեկությունները հաշվառել հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում, կազմել շրջանառության տեղեկագրեր և վարել գլխավոր գիրքը:

Առաջարկություն – առաջարկվում է տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել մարզպետի որոշման նախագիծ, որով առաջարկել համայնքի ղեկավարին քննության առնել արձանագրված թերություններն ու բացթողումները և միջոցներ ձեռնարկել վերացնելու ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

 Ի. ԱՍԱՏՐՅԱՆ  
3<sup>րդ</sup> թիվ, ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ  
 Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ  
 Հ. ՕՀԱՆՅԱՆ  
 Վ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ  
 Վ. ՊՈՂՈՍՅԱՆ